81. ԱՆԳԵՏ ԱՍՏՂԱԲԱԽՇ

Մովսես մարգարեն կէրթեր աստվածախոս, ճամպին տեսավ մարդ մե զուր չադրը զարկեր էր մըշ նեղ ձորու մե։

— Մա՛րդ,— ըսեց Մովսես,— թողեր իս զբանձր տեղրան, ղչադրրտի զարկեր իս մըշ իդա ձորոն, օր անձրև էկավ, հեղեղ էղավ, ի՞մալ կէնիս։

Մարդն ըսեց.

— Ես աստղարա՛խշ իմ, զէդ հաշիվն էրեր իմ, ֆոնցկա քառասուն օր անձրև չիգա, ընդուց դեն բան մե կէնինք։

Մովսես գնաց աստծու մոտ, շատ խոսացին, ըսին, լսին, աստված հարցուց.

— Մովսե՛ս, մըշ ախշըրքին ի՛նչ կա, չկա։

— Ի՞նչ կա,— ըսեց Մովսես,— մըշ ախշըրքին կան ամբարտավան, անգետ մարդիկ, օր աստծու բաներու մեջ կը խառվին, ի՞մալ օր էն աստղաբախշ։

— Միտքդ հասկըցա,— ըսեց աստված,— դառնալուն կը տեսնաս զաստղաբախշի հալ։

Մովսես դառձավ էկավ, տեսավ, օր հեղեղն ֆելեր էր, զաստղաբախշի էղած-չէղած սրբեր տարեր էր։

— Մա՛րդ, չէ՞ ես քըզի ըսի չադրրն հմլա վնասով տեղ մը զա՛րկի, ընձի ֆորի՞ն չը լսեցիր։

Աստղաբախշն ըսեց.

— Վնաս չըկեր ու չըր էղնի, թե օր սատանի պես չարախոսութեն չէնեն աստծու ֆառեջ։